ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.5. Ադրբեջան: Աշխարհագրական դիրքը, բնական պայմանները և ռեսուրսները

• • •

Նավթաքարերը Ադրբեջանի ամենաարևելյան բնակավայրն է: ՈՒՆի շուրջ 400 բնակիչ (2020թ): Որպես ծովային ամենահին նավթային պլատֆորմ գրանցվել է Գինեսի ռեկորդների գրքում: Բնակավայրի շինարարությունը սկսվել է 1958թ-ին: Կառուցվել են երկու էլեկտրական, կաթսայատուն, 2-5 հարկանի բնակելի շենքեր, մեկ շենք էլ՝ 9 հարկանի, հանրակացարան, ճաշարան-սրճարան, բաղնիք, ֆուտբոլի դաշտ, պոլիկլինիկա, դպրոց, մանկապարտեզ, խմելու ջրի համար ջրազտիչ սարք, հուշարձան, մզկիթ, բանկի մասնաճյուղ, լիմոնադի և հացի արտադրամաս: Ցամաքի հետ գործում է լաստանավային, ինչպես նաև ուղղաթիռային կապ: Կա մի քանի թռիչքուղի և փոքրիկ օդանավակայան: